ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԷՍ-2019/16, 04.02.2019թ.

Բողոք բերող անձ՝ Ռուստամ Արտաշեսի Սարգսյան ԱՁ

Պատվիրատու՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱԱՊՁԲ-02/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ / սեղմված բնական գազի ձեռքբերում.

Բողոքի պահանջը՝

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 21.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 02 արձանագրության համապատասխան որոշմամբ «ԶԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին առաջին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին կայացրած որոշումը:

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 29.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 03 արձանագրության համապատասխան որոշմամբ «ԶԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացրած որոշումը:

3. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումը:

4. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

• 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

• 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

<<ՌՈՒՍՏԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍԻ Ա/Ձ>>

31.01.2019թ

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «ՌՈՒՍՏԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍԻ Ա/Ձ»
հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տերյան փող., 133
հեռ՝ 099033539
էլ. փոստ՝ m.kirakosyan201996@mail.ru, hayk_khazaryan@mail.ru

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ
հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Վարդանանց հրապարակ 1

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով «ՀՀՇՄԳՀՀԿՀ ԷԱԱՊՁԲ-02/19» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգ

ՀՀ ֆինանսների նախարարության
ԱՆՀՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄՈՒՏՔ N 4068-19
«04» 02 2019թ.

Բողոք

Գործի հակիրճ նկարագրությունը և փաստերը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կարիքների համար կազմակերպվել է ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱԱՊՁԲ-02/19 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում սեղմված բնական գազը:

Ընթացակարգի հայտերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվել 18.01.2019թ ժամը՝ 15:55-ը:

Հակադարձ աճուրդի ժամկետ է սահմանվել 21.01.2019թ ժամը՝ 15:55-ը:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել «ՁԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Ռուստամ Սարգսյանի (այսուհետ նաև՝ Ա/Ձ) կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2019թ թիվ 02 արձանագրության համապատասխան որոշմամբ «ՁԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչվել է առաջին տեղ գրաղեցնող, իսկ 29.01.2019թ թիվ արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է «ՁԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Ա/Ձ-ի մասնակցությունը 21.01.2019թ ժամը՝ 15:55-ին կայացած աճուրդին սահմանափակվել է ժամկետի խախտման պատճառով:

Ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է 29.01.2019թ-ին:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումը

Ընթացակարգի հակադարձ աճուրդին Ա/Ձ-ի մասնակցությունը սահմանափակվել է, քանի որ խախտվել է ՀՀ կառավարության 2017թ մայիսի 18-ի «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 534-Ն որոշմամբ սահմանված էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի (այսուհետ՝ էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգ) 13-րդ կետով սահմանված դրույթները, համաձայն որի աճուրդն սկսվում է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ հրավերով սահմանված ժամին, այսինքն հակադարձ աճուրդը պետք է սկսվեր 22.01.2019թ ժամը՝ 15:55-ին, այլ ոչ թե 21.01.2019թ ժամը՝ 15:55-ին:

Ա/Ձ-ն չնկատելով, որ համակարգում որպես հակադարձ աճուրդի օր նշված է եղել 21.01.2019թ. ինչպես միշտ պատրաստվել է աճուրդին մասնակցել հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը, այսինքն 22.01.2019թ (հիմք է ընդունվել նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տարածած հաղորդագրությունը այն մասին, որ ծրագրի հափանման պատճառով որոշ գնման ընթացակարգերի հայտերի ներկայացման վերջնաժամկետներ երկարաձգվել են մինչև 18.01.2019թ և դրանց շրջանակներում աճուրդները կսկսվեն 22.01.2019թ), այնինչ այդ օրը մուտք գործելով համակարգ պարզվել է, որ աճուրդն արդեն կայացել է 21.01.2019թ-ին:

Ա/Ձ Ռուստամ Սարգսյանը գտնում է, որ Ընթացակարգը կազմկակերպվել է խախտումներով, ինչի արդյունքում սահմանափակվել է նրա մասնակցությունը հակադարձ աճուրդին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձից

Խնդրում եմ՝

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 21.01.2019թ-ին տեղի ունեցած նիստի թիվ 02 արձանագրության համապատասխան որոշմամբ «ԶԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին կայացրած որոշումը:
2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 29.01.2019թ-ին տեղի ունեցած նիստի թիվ 03 արձանագրության համապատասխան որոշմամբ «ԶԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացրած որոշումը:
3. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ընթացակարգի շրջանակներում պամանագիր կնքելու մասին կայացված որոշումը:
4. Պարտավորեցնել Պատվիրատուին և/կամ գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Կից ներկայացվում է՝

1. Բողոքը ներկայացնելու համար պահանջվող վճարը հավաստող փաստաթուղթ (Վճարման հանձնարարագրի անդորրագրի բնօրինակ)՝ 1 թերթ
2. Արձանագրություն N02-ի և N03պատճենները՝ 4 թերթ

«ՌՈՒՍՏԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍԻ Ա/Ձ» ի
լիազորված անձ Արման Կարենի Մկրտչյան _____